ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մարզի համայնքներում 2017թ. առաջին կիսամյակում կատարված գյուղատնտեսական աշխատանքների մասին

Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում շուկայականից ցածր գներով, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով մարզի հողօգտագործողներին է հատկացվել է .

Պարարտանյութեր

- Ազոտական պարարտանյութ 525.8տ
- Կալիումական պարարտանյութ 8.8տ
- Ֆոսֆորական պարարտանյութ 7.1տ

Սերմեր

- Գարնանացան ցորեն 3.05տ
- Գարնանացան գարի 32.558տ
- Հնդկացորեն 0.02տ
- Սիսեռ 0.546տ
- Առվույտ 0.115տ
- Կորնգան 2.096տ

- **Դիզելային վառելանյութ** 33175լ

2017թ ցանքատարածությունները կազմում են 5172հա / աղուսյակում ներկայացվում է ըստ մշակաբույսերի/

Հ/հ	Մշակաբույսը	2017թ	
		Ցանքա-տարածք /հա/	Պահպանված (բերքատու) տարածք /հա/
1	Հաց. և հատիկ.	2387	2387
2	Ցորեն ընդամենը, որից՝	879	879
3	աշնանացան ցորեն	629	629
4	գարնանացան ցորեն	250	250
5	Գարի ընդամենը, որից՝	1123	1123
6	գարնանացան գարի	1123	1123
7	աշնանացան գարի		
8	Եգիպտացորեն		
9	Այլ հացահատիկ	306	306
10	Հատիկաընդեղեն	79	79
11	Բանջարեղեն, որից՝	535	535
12	լոլիկ	103	103
13	Բանջ. մշակ. սերմադ.		
14	Բոստան	34	34
15	Կարտոֆիլ	224	224
16	Պտուղ և հատ.	2156	1991
17	Խաղող	985	972
18	Կերային մշակ.	1847	1975
19	Տեխն. մշակ.	17	17
20	Ընդ. խոտի կուտակում		
Ընդամենը ցանք.			**5172**

Բույսերի պաշտպանության ծրագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անվճար մարզի 11 համայնքների հատկացած 106կգ ռոդիֆակում թունանյութի միջոցով 1325հա վարակված վարելահողերի և բազմամյա տնկարկների վրա իրականացվել է մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ :

Եղեգնաձորի պահածոների գործարանի արտադրական հզորությունները թույլ են տալիս տարեկան մթերել շուրջ 1600տ. պտուղ-բանջարեղեն, որը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված պտղի և բանջարեղենի իրացումը արդյունավետ կազմակերպելու համար, 20.07.2017թ դրությամբ գործարանի կողմից մթերվել է 71.3տոննա պտուղ-հատապտուղ և 1.5տոննա բանջարեղեն:

Աղավնաձոր, Արփի, Ռինդ համայնքներից արտահանվել է 77 տոննա ծիրան:

Հինգ կաթ մթերող և վերամշակող ընկերությունները / Սալլի <<Սելիմ>>ՍՊԸ, Ելփին<<Գերասիմ>>ՍՊԸ, Աղնջաձոր ,Գնդեվազ <<ԷԿՈֆարմ>> ՍՊԸ, Եղեգնաձոր<<Գոլդեն Գոութ>>/ տարեկան մթերում են 1300տ կաթ:

Գործող հինգ չրանոցների/արևային 3881ք/մ, ջերմային 5,9տ/ և 15 սառնարանային տնտեսությունների /649տ/ արտադրական հզորությունները թույլ են տալիս իրականացնել մարզի հողօգտագործողների կողմից արտադրված պտուղ բանջարեղենի իրացումը:

Մարզի 14 համայնքներում առկա են 44 ջերմոցներ, 2,2 հա ընդհանուր տարածքով, որոնց միջոցով կանխատեսվում է արտադրել մոտ 100տ բանջարեղեն:

Առկա են 24 կոոպերատիվներ, որոնց անդամների ընդհանուր թիվը 1140 մարդ է : Կոոպերատիվներն ունեն հետևյալ ուղղվածությունը. չրի արտադրություն - 1, անասնապահություն-7, մրգի սառնարանային պահպանություն – 7, բուսաբուծություն-2, կաթի մթերում և վերամշակում - 3, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայական սպասարկում - 4:

Ինտենսիվ եղանակով մշակվում է 5.7հա պտղատու այգի, 21 հա խաղողի այգի և 12հա հատապտուղ/ մորի, մոշ/:

Անհատ ձեռներեցների կողմից կառավարություն է ներկայացվել 20 ներդրումային ծրագրեր, որոնցից 8-ը արժանացել է հավանության:

Ըստ <<Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ոլորտի ծառայություն>> ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված օպերատիվ տվյալների մարզի համայնքներում 30 անասնաբուժների կողմից իրականացվել են պետ. պատվերով նախատեսված ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումները, ըստ սահմանված պլանի և ժամանակացույցի:

Օգոստոսի 1-ին նախատեսվում է շահագործման հանձնել Զառիթափի սպանդանոցը, որի արտադրական հզորությունը կազմում է հերթափոխին 30 գլուխ խոշոր և 300 գլուխ մանր եղջրավոր կենդանիների սպանդ :

2017 հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 19775 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից կովեր՝ 8419 գլուխ, մանր եղջերավոր՝ 16808գլուխ, խոզեր՝ 2490 գլուխ , թռչուններ՝ 66706թև և մեղվաընտանիք՝ 23189 փեթակ:

2017 թվականի 1-ին կիսամյակում ACBA-CREDIT AGRIKOLE բանկի միջոցով մարզի 552 գյուղացիական տնտեսություններին տրվել է շուրջ 577 555 000 դրամ, 35 գյուղացիական տնտեսությունների 980900 դոլար գյուղատնտեսական նշանակության վարկեր՝ 14-20 % տոկոսադրույքով, երեք տարի մարման ժամկետով և 393 գյուղացիական տնտեսությունների 375 000 000 դրամ սուբսիդավորված վարկեր 14% տոկոսադրույքով, 2 տարի մարման ժամկետով: կառավարության կողմից սուբսիդավորվում է վարկերի 6%-ը:

2010-2017թթ համայնքների կողմից ձեռք է բերվել 54 միավոր գյուղ տեխնիկա, իրենց գյուղ գործիքներով:

Մարզում առկա է 21 հացահատիկահավաք կոմբայն, որոնցից սարքին են 17-ը: Կոմբայնները ըստ գոտիականությամբ համակարգված տեղաշարժելով կարող ենք խնդիրներ չունենալ բերքահավաքը ժամանակին և անկորուստ իրականացնելու աշխատանքներում:

Կարկտահարությունից վնասվել են Աղավնաձոր, Ազատեկ, Փոռ, Գոմք համայնքների այգիներն ու ցանքատարածությունները.

	Վնասված հեկտարը	կարկտահարման տոկոսը	Հեկտարի միջին բերքը g	Համախառն բերքը տ	Վնասի չափը տ	1կգ միջին գինը դր.	Վնասի չափը մլն.դր
խաղող	35	67	60	210	140	160	22.4
պտուղ	227	65	32	726	471	200	94.2
Բանջար	7.3	60	200	146	88	100	8.8
ընդամենը	-	-	-	-	-	-	125.4

<<Եղեգնաձոր>> ՋՕԸ- ի կողմից իրականացվում է ջրամատակարարում ըստ ջրապահանջի:

Մարզի Արենի, Աղավնաձոր, Ռինդ,Գնիշիկ և Գետափ համայնքներում տեղադրվել են յոթ հակակարկտային կայաններ,/80հա-ական ծածկողականությամբ/, կարկտահարության դեմ

պայքարի լիարժեք աշխատանքներ իրականացնեու համար անհրաժեշտ են ևս 20 հակակարկտային կայաններ:

Վարչության կողմից մարզպետարանում կազմակերպվել են հանդիպումներ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող <<Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն>> ծրագրի , ինչպես նաև << մեղվաբույծների Ասոցացիայի ու մարզի ֆերմերների միջև:

Գյուղատնտեսության և բնապահպանության
վարչության պետ՝ Մ.Ներսիսյան

Կատարող՝ Գ.Խաչատրյան